

# ՆՈՐՕՐ

Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ  
ԿԸ ՀՐԱՏԱՐԱՅՈՒԻ ԶՈՐԵՔՇԱԲԻ ԵՒ ՇԱՐՄԹ ՕՐԵՐԸ

ՈՍՏԱՆՈՐԳՐԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԳԻՊՏՈՍ

ՂՐՇ. ՈՂԶ

Գանձերի համար	ճարտար	50
» » վեցամսեայ	» »	30
Շրջակայից	ճարտար	60
» » վեցամսեայ	» »	35

ԱՐՏԱՍԱԶՄԱՆ ԶԱՐԲ

ճարտար	» »	18
վեցամսեայ	» »	10

ՌՈՒԹՈՑ ԵՒ ՆՈՂԱՍԹԻ ԶԱՐԲ

ճարտար	» »	7
վեցամսեայ	» »	4

ՈՍՏԱՆՈՐԳՐԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵՒ ԲՂՔԱՏԱՐԻ ԾԱԽՔԸ

ԹԵՐԻՆ ԿԱՐՉՈՒՔԻԱՆ ՎՐԱՅ Է

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ «ՆՈՐ ՕՐ»

ՆԱԽԱԿ ԿԱՐ ՈՅԻՔ ԲՂՔԱՏԱՐԻՆ  
ՊԵՏԵՐ ԵՒ ՈՒՂԱՆԻ ԱՌ

Վարչութիւնը ՆՈՐ ՕՐ Բարձր  
ԳԱՀԻՐԷ

Direction du journal

NOR-OR

Caire

Չեռագիրներն կա չեն դարձուիր,  
ԱՐՏՈՒՏԱՏԵՐ Ժ. ՄԻՆԵՒԷ

ԶՈՐԵՔՇԱԲԻ 14/24 ՀՈԿՏԵՄԲԵՐ

ՔԱՄԱՆ ՓԱՐԱՅ ՈՂԶ

Ա. ՏԱՐԻ ԹԻ 40

## ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՆԵՐԿԱՑ ՏԱՐԷՈՑՍ ՕԳՈՍՏՈՍԻ 11-ԷՆ  
ՄԿՍԵԱԼ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ  
ԿՆԻՔԸ ՈՒ ՔԱՐՏՈՒՂԱՐ-ՆԵՐԿԱՑՈՒՑՈՒ  
ՑԻՉ ՏԻՍԱՐ ՄՄԲԱՏ ՓԱՓԱՉԵԱՆԻ ՄՏՈՐ  
ՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԶԸ ԿՐՈՂ «ՆՈՐ ՕՐ»-Ի  
ԸՆԿԱՆԱԳԻՐՆԵՐԸ ԱՆՎԱԽԵՐ ԿԸ ՆԿԱՏ-  
ՈՒԻՆ:

\* \* \*

ՎԱՐՉՈՒԹԻՒՆՍ ԿԸ ՓՈԽՊԱՑ ԾԱՅ-  
ՑԱՐԱՐԵԼ ԹԷ «ՆՈՐ ՕՐ»-Ի ԽՄԲԱԳՐԱՍ-  
ՊԵՏ ՏԻՍԱՐ ՄՄԲԱՏ ԲԻՒՐԱՏ ԱՅՍ ՕՐ-  
ՈՒՄԵԼ ՄԿՍԵԱԼ ԴՈՒՐԱՐԵԱԼ Է «ՆՈՐ  
ՕՐ»-Ի ԽՄԲԱԳՐԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԷՆ:

22 ՄԵՊՏ. 900

\* \* \*

«Նոր Օր»-ի վարչութիւնը կը խնդրէ  
Արտասահմանի ու կողմասի արգոյ  
բաժանորդներէն որ հասնին պահան-  
ջել հրկառողով մը «Նոր Օր»-ի պակաս  
ստացուած թիւերը, որոնք պիտի  
զրկուին անմիջապէս:

Նոյնպէս կը խնդրուի «Նոր Օր»  
ստացող բոլոր կողմասի հայ թեր-  
թերու ու հանդէսներու Պատ. Խրմ-  
բանգիրներէն որ իրենց հրատարակու-  
թիւնները փոխանակեն «Նոր Օր»-ի  
հետ:

## ՍԵՊՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ինչպէս որ ամէն տեղ, նամանակ-  
անոց Եզդիպոսի հողին վրայ, սեպ-  
հականութիւն բառը չափազանց կը  
գործածուի:

Վեց տարիէ ի վեր Պոլսէն Եզդիպ-  
ոսս եկած եմ, հրապարակին վրայ  
ամէն օր արարական ու երոպական  
թերթներու մէջ սեպհականութիւն բա-  
ռը լսած եմ ու կը լսեմ:

Վեր նայեցէ՛ք, կը խնդրեմ, «Նոր-  
Օր»-ի գրուած անգամ խոշոր տառե-  
րով սեպհականութիւն բառը պիտի  
տեսնէք. ինչի՞ սեպհականութիւն. Լաւ-  
րան-Ընթերցասան սեպհականութիւն:  
Չէ՛ք նշմարեր տեղը փոխուած է ու  
տառերը աւելի խոշորցած:

Ճիշդ ասոր նման միայն բան մը

եկաւ գոնէ պատմեմ: Նոր եկած տա-  
րիս առաջին անգամ էր որ ձեռքս  
անցաւ «Ժուռնալ Էթիօպիէն» անուն  
գեռ նոր հրատարակուած ֆրանսերէն  
լրագիր մը, որուն գլուխը անմիջա-  
պէս աչքիս զարկաւ երկտող մը «Լ'է-  
թիօպիէն է մօն բէյի». ըսել կուզէ «Ե-  
զդիպոսը իմ երկիրս է». բաց աստի  
ժէնէրալ վոլտէյի մէջ յայտարարու-  
թիւնը Եզդիպոսի համար, որուն վրայ  
ուշադրութիւնս վերջէն դարձաւ:

Կը խորհէի թէ ինչ շարժումի՞  
կրնար ըլլալ ատանկ պարբերութիւն  
մը ֆրանսերէն թերթի մը ճակատը  
զրուելու:

Ճիշդ այդ պահուն Անգլիական դօ-  
րաց գոնդ մը, կարծես Եզդիպոսը  
իրենցը եղած ըլլար, փողերու և թըմ-  
բուկներու գոռում գոչումով կ'անց-  
նէր առջևէս, քիչ մը վերջը դուրս  
բրգան «սէյի»ներու տարօրինակ ա-  
ղաղակներ, որոց կը հետեւէր շքեղ  
կառք մը, մէջը նստած կարմրայտեայ  
ուժեղ և պատկառելի դէմք մը հազիւ  
յիսնամեայի երևոյթն ունեցող, որու  
համար զլխարկներ գլխիբեկ կ'ըլլա-  
լին, ու յանչափս յարգանքներ կ'ըն-  
ծայուէին: Ժուռնալը մէկ ձեռքս,  
հարցուցի թէ ո՞վ էր այդ անձը. Լորտ  
Գրոմէրն է ըսին, որուն Անգլիական  
վարչութեան Եզդիպոսի ներկայա-  
ցուցիչ ըլլալը ի վաղուց գիտէի:

Այդ տպաւորութեան ներքեւ, մտա-  
բերեցի որ մի գուցէ ձեռքիս լրագի-  
րը, այս խրտոցներուն դէմ բողբոջ  
Եզդիպոսի օտկան մը ըլլայ. սկսայ  
թերթին խմբագրականը կարգալ. ինչ  
տեսնեմ, վերէն վար, Լորտ Գրոմէր-  
րին, Անգլիական վարչութեան գոր-  
ծերուն դէմ կարգ մը հայհոյանքներ,  
բաշխուքներ կայն:

Այլ ևս հասկցայ վերի պարբերու-  
թեան ոգին որ ըսել կուզէր թէ՛ «Ե-  
զդիպոսը՝ Եզդիպոսացոց սեպհականու-  
թիւնն է և, ոչ թէ Անգլիացոց»:

Ինչպէս «Նոր-Օր»ը Լսարան-Ըն-  
թերցատան սեպհականութիւնն է և  
ոչ թէ . . .

Բայց ինչ փոյթ այդ ֆրանսական  
թերթին, և ինչ կը նշանակեն այդ-  
բան իրարանցում Եզդիպոսցի մը  
սեպհականութիւնը պաշտպանելու  
համար: Ո՛չ. այդ թերթը պարզապէս  
Ֆրանսայի Եզդիպոսի մէջ կորսուած

չահերն է որ կ'ողջայ. ահա՛ խնդրոյն  
հոգեբանականը. ինչ շահ. կրնա՞ք  
բացատրել:

Ո՛չ ապաքէն 1882ին Արապի փա-  
շայի ապստամբութեամբ Աղեքսանդ-  
րիոյ մէջ դէպքերը երբ հետզհետէ  
ժանրանալու վրայ էին, Անգլիական  
և Ֆրանսական նաւատորմիները,  
փութացին քրիստոնեայներու օգնու-  
թեան հասնիլ, և երբ խռովարար-  
ները ի կարգ հրափրելու համար ան-  
հրաժեշտ եղաւ քաղաքը ուժակոծել,  
Գաղղիա առարկելով թէ կեզրոնէն  
պէտք եղած հրահանգը հասած չէր,  
այս մասին, չի մասնակցեցաւ:

Անգլիական հրամանատարը ամէն  
պատասխանատուութիւն ստանձնելով  
սկսաւ ուժակոծել. վերջապէս Անգ-  
լիական զօրագոնը մտաւ քաղաք ու  
հրապարակը հանգարտիլ սկսաւ:

Այն ատեն ժէնէրալ վոլտէյ յա-  
նուն թագուհւոյն յայտարարութիւն  
մը ըրաւ ու ըսաւ «Անգլիական զօր-  
քերը Եզդիպոսս մտան պարզապէս  
խաղաղութիւնը վերահաստատելու  
նպատակաւ. Մեծին Բրիտանիոյ թա-  
գաւորութիւնը Եզդիպոսի մէջ քա-  
ղաքական ցամաքային կամ ուրիշ ո-  
ւել գիտում չունենալը այժմէն կը  
տարարէ»:

Այս յայտարարութիւնն էր որ  
ժուռնալին գլուխը տեսայ ըսի. քիչ  
մը առաջ. Անկէ ի վեր 18 տարիներ  
անցան, Անգլիա դեռ մեկնած չէ Ե-  
զդիպոսէն:

Պ. Տրոյնգլ՝ նշանաւոր ֆրանսացի  
հայրենասէր մը և իւր կունակից օւ-  
կաններն՝ ցորչափ ականառեւ կ'ըլ-  
լան Անգլիոյ այս եռանդուն ընթաց-  
քին, ինքզինքնին կ'ուտեն:

Կը վախնան որ մի գուցէ անգլի-  
ական վարչութեան ներկայացուցիչ  
Լորտ Գրոմէր՝ կուլ տալով իւրացնէ  
Եզդիպոսը. և ատանկով Եզդիպոսս  
դառնայ անգլիական սեպհականու-  
թիւն մը:

Անգամ մ'ալ Եզդիպոսցիին հար-  
ցուր թէ ինչ կ'ընէ ֆրանսացիին.  
«Մենք բնաւ երկիւղ չունինք, կ'ընէ,  
որ Անգլիա մեր սեպհականութիւնը  
կուլ տայ. և անգլիական վարչու-  
թեանն ու անոր ներկայացուցիչ Լորտ  
Գրոմէրէն դժգոհ ըլլալու պատճառ  
մըն ալ չունինք. Չեզի ո՞վ պաշտօն

տուաւ մեր սեպհականութեան շահե-  
րը պաշտպանել, Չեր ինքնակոչ Ե-  
զդիպոսների քարոզներովն»:

Արդարեւ, փաստ է կը որ եթէ  
Ֆրանսա իւր անհետաճեց քաղաքա-  
կանութեամբ կորսնցուցած չ'ըլլար  
իւր շահերը Եզդիպոսի մէջ, եթէ  
ինքն ալ Անգլիոյ նման ոտը կոխած  
ըլլար հոն, այլևս այդ թերթերու և  
ոչ մէկը յանուն Եզդիպոսցիին բառ  
մը անգամ չ'ը պիտի արտասանէր:

Մեր մէջն ալ Հայ մամուլը պատիւ  
չը բերող թերթեր կը գտնուին եր-  
բեմն, որ լսի անարժանութեան մը  
չնորհիւ վտանգուած տեսնելով իրենց  
անձնական շահերն, կը սկսին գձձու-  
թեամբ ուսայայտ վախճանաչութեամբ  
հրապարակ նետել այսօր «սեպհա-  
կանութիւն» բառը վաղն ալ ուրիշ բան  
մը. չեն գիտե՞ր ժողովուրդը այնքան  
տգեալ չէ հասկնալու թէ՛ անոնց շըր-  
թունքէն թոյնի նման գուրս թափած  
խօսքերն պարզապէս «կորսուած անձ-  
նական շահու ողբերն են»:

Շնորհակալ եմք այդպիսիներու ո-  
րոնք իրենց տգիտութեամբը նիւթ  
հայթայթելու ծառայութիւնն մատու-  
ցած կ'ըլլան մեզի և ժողովրդեան.  
մինչև իսկ մի բնին բաժանորդներ  
խնդրեցին «Նոր-Օր»է՛ս «Սեպհակա-  
նութեան» վրայ ընդհանուր տեսու-  
թիւն մը ընել, որով թէ հանրութիւնը  
օգտուի և թէ նոյն ինքն այդ նիւթը  
հայթայթող թերթը:

Արդարեւ «սեպհականութեան» հար-  
ցը ամէն դասակարգի համար օգտա-  
կար կրնայ ըլլալ:

Սեպհականութիւնը իրաւունք մ'է  
որուն տէրը ուզածին պէս կը վայելէ,  
նա՞ միայն ազատ է տրամադրելու  
իւր սեպհականութիւնը ունէ մէկու մը  
զրամով կամ ձրի:

Նա միայն բառը շեշտելուս պատ-  
ճառը կայ. բան մը որ Լ. . . ին սեպ-  
հականութիւնն է Ս. . . չի կրնար ծա-  
խել. եթէ Ս. . . ծախել ալ ուզէ եր-  
րորդը ծախու չ'անեն:

Արդեօք ընկերութեան Ար գոյքը  
ո՞վ կրնայ արամագրել. քիչ մը վարը,  
ընկերութեանց կարգին պիտի խօսինք.  
անցնինք մեր նիւթին:

Օրէնսգետները մէկիկ մէկիկ որո-  
շած են այն ամեն եղանակները ո-  
րոնցմով միայն անհետ մը, ընկե-

րոտիսն մը և կամ տերութիւն մը կրնայ սեպհականութեան մը տէր դառնալ, և որոնք անհաստեղէն սկսելով կրնան յետագայ կերպիւ համառօտուիլ:

**ԱՆՀԱՏ ՄԸ ԻՆՉ ԵՂԱՆԱԿՆԵՐՈՎ ՈՒՐԻՇԻ ՄԸ ՈՒՆԵՑԱԾԻՆ ՏԷՐ ԿՐՆԱՅ ԸԼԼԱԼ**

1. Գնում կամ վաճառում. — Անհատ մը երբ կը փափաքի ուրիշի մը ունեցածին տէր ըլլալ, կը գիմէ անոր տիրոջը. անոր բացարձակ կամքէն կախեալ է ծախել իր գոյքը, ըլլայ շարժուն կամ անշարժ. եթէ հաճութիւն տայ ծախելու դաշինքը կը կրն. քուի, որով մին պէտք է դրամը վճարէ, իսկ միւսն ալ գոյքը յանձնէ. այս եղանակաւ մէկու մը սեպհականութիւնը օրինաւորապէս միւսին անցած կ'ըլլայ. իսկ եթէ հաճութիւն չի տայ ծախելու, որքան քանակութեամբ ոսկի տրուի իրեն, բռնի ձեռքէն չի կրնար առնուիլ:

2. Նուէր (տօնասիւն. հիպէ). — Սա բանը «իմն» է կամ «իմ սեպհականութիւն» է կարենալ ըսելու համար, ուրիշ գնած ըլլալը և կամ իրեն նըւէր տրուած ըլլալը ապացուցանելու է:

Ինչպէս կ'ըլլայ ապացոյցը. — Եթէ նուէր տրուած և կամ գնուած բանը, հողի և կամ տան պէս անշարժ այսինքն տեղէն չը շարժելիք ստացուածք մըն է, ծախողին և կամ նուէր տուողին ստորագրութիւնը և կամ վաւերական կնիքը կրող օրինական թուղթերը մէջտեղ բերելու է:

Բաց աստի գործողութիւնը, դատարանը արձանագրուած և 100 տուրքն ալ վճարած ըլլալու է. հակառակ պարագային երրորդ անձի մը դէմ անվաւեր կը նկատուի:

Գերահասակնալի ընելու համար օրինակ մը բերենք:

(Շարունակելի)

Սեպհականութեան եղանակները՝ այսինքն պատճառները՝ գրեթէ ամէն երկրի օրէնքներուն մէջ միևնույն են. միայն թէ գծման և մուշտի արձանագրութեան համար կատարուած գործողութիւնները ամեն երկրի միևնույն չեն. մեր ժամանակակից ընկալած է թէ Եգիպտոսի վերաբերեալ պիտի ըլլայ:

**ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՈՂԲԵՐԳԱԿԱՆ ՏԵՍԱՐԱՆ**

**ՓԱՍՏԱՐԱՆԸ ՓԱՍՏԱՐԱՆԻՆ ԴԵՄ**

Հայաստանի գաւառներն՝ այլազգ մը Պ. . . որ Հայու մը հաւատար հայերն կը խօսի, Եգիպտոս կուգայ ու կը պատահի Ս. . . ին ու կ'ըսէ:

Պ. . . ին իրեն հարգատ խօսակցութիւնն է հետեանքը:

Պ. — Միտիւ, և հոս գատ ունիմ, կ'ազանիմ ինձի էֆէնտիի մը տանէիր որ զատու տեսնէր:

Ս. — Անգամ մը ինձի պատմէ դատող, ու վերջէն միտախն կ'երթանք, եթէ եարար բան մըն է, կ'ըլլայ:

Պ. — Շատ աղէկ, ես քեզի նախ ընեմ վերջէն էֆէնտիին խօսէ, չ'ըլլար մի:

Ս. — Ըսէ նայիմ, որի դէմ է դատող:

Պ. — Իրաւ որ անունը չիտեմ:

**Ա Չ Պ Ա Յ Ի Ն**

Վսեմ. Տիգրան փաշա երէկ Եւրոպայէն քաղաքս վերադարձաւ:

Վերաւերդի մէջ կը կարգանք:

Անցեալ ուրբաթ օրուան Պոլսոյ Խառն ժողովոյ կրօնական անդամներէն միայն Երեբը ներկայ լինելով, կրօնաբ խնդիրներու մասին որոշումներ չեն տրուած: Բայց ուշագրաւ պարագայ մըն է որ կրօն. ժողովոյ Գերատեսնապետ Մանուկի Սրբազանի գիր մը կ'ուղղէ ժողովին, որուն մէջ կը յայտնէ իր յօդադատէ տառապելուն համար ժողովոյ նիստին չի կրնալ գտնուելու, և տեսակ մը կ'ազդարարէ որևէ խնդրոյ մասին վերջնական որոշում չի տրուի, վստահ լինել ալ իր Ժողովական կույզէ իր կարծիքը յայտնել:

Գեր. Մանուկի Եղիաշարայի այս սպառնալից խոսքով արարողոյ մըն է, ինչ քան վստահութիւն չունի Օսմանեան Պատրիարքին ու Քաղ. ժողովոյ անդամներուն:

Ինչպէս գիտենք Պոլսոյ մէջ, միմիայն Մանուկի և Յովհաննիսեան Սրբապետները եղած են սպառնալի խոսքով սպառնալու և Խառն ժողովոյ պաշտօնում անդամներուն ձգտումները շարժառիտը. ուստի այդ պատճառաւ ալ շատերին աչքին փուշ կ'երթան այդ երկու Ս. Հայրերը:

**ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՀՐԹԱՐԱՐԱՆՆԵՐ**

Վերաւերդի կ'ըսէ թէ՛ Ս. Մարտի, Շապին Գարահատարի, Երկրայի, Էօնկիրիի, Սղերդի, Քլիի և դեռ ուրիշ մի քանի տեղերու Առաջնորդ և Տեղապահ Հայրերը, կարծես ամենը մէկ խօսք բրած, փութաթացած են իրենց հրատարակումները Պատրիարքարան իրիկէ. Խառն ժողովը միմիայն Էօնկիրիոյ Առաջնորդին հրատարակած ընդունելով. միանելու նը մերժած է:

Ասոնց պատճառը, կ'ըսէ, ուրիշ բան չէ բայց եթէ, այդ առաջնորդներուն մեծ մասը երիտասարդ և ետանդուն վեւարարներ են որոնք ինչպէս Օսմանեանի աշակերտ Արմաշու փանդէն, բայց չը պիտի կրնային համբերել քանի որ իրենց հոտին ու ժողովրդեանը ցուրտը չեն կրնար լսել ընկն տալ Օսմանեան Պատրիարքին:

Մէկ կողմէն գաւառներու կառավարչները՝ սպառնալի փոթարարները կը փակեն ու փակուածներն ալ թող չեն տար որ բացուին. միւս կողմէն «Միջին խոսք»-ի մէջ իրենց գաւառական խառնակներն իսկ կը զրկուին, Հայրեր իրենց աչքին տուչե կը կողպուտին ու կը հարտաշարունին, որուն դէմ ինչնամիտ և պարտաճանաչ առաջնորդ մը չի կրնար լսել եթէ կուզէ իր պաշտօնը խղճի մտքը կատարել:

Ս. — Վաճառական է, պաշտօնեմ չէ, ինչ է:

Պ. — Ճշմարիտ ինչ գոյն ունենայր ես ալ չ'իտեմ:

Ս. — Ան ինչ գարմանայի բան, հակառակորդին անունը չը գիտնալ կ'ըլլայ մի իս, գոնէ ինչ գործ կ'ընէ, ան ըսէ:

Պ. — Ինչ ըսեմ միտիւ, մէկ տարուան մէջ հազարու մէկ անուն կը փոխէ, գործ չի կայ քի մէջը պուշաշիւ չ'ըլլայ, ամէն ազգէ անուն ունի:

Ս. — Եղբայր, Քրիստոսեայ է թէ Մահձմտական:

Պ. — Իրեն շահուն կէօրէ է, ատեն մը Բողոքական էր. ատեն մալ մահձմտական եղաւ իր բաղքին մէջ:

Հապա հոս ինչ կ'ընէ եղբի գիտեմ. Լուսաւորականի բով Լուսաւորական կ'ըլլայ, Բողոքականին բով Բողոքական:

Ս. — Հետաքրքրուելով, ինչ հպատակ է, պապա:

Պ. — Անցեալ տարի Օսմանցի հպատակ էր, կ'իւր հիմակ իր հպատակութիւնն ալ փա

**ՕՐՄԱՆԵԱՆԻ ՍՊԱՌՆԱԼԻՔԻՆ ՈՒ Բ. ԴՈՒՌԸ**

Նաև «Աժանա Պիւլիտի» Պոլսէն տուցած մէկ հետադրին նայելով՝ Օսմանեան պատրիարքը զգալով իր ամէն գիտնալներուն մէջ յուսախար եղած ըլլալը, որոշել է վերջապէս Մեծ Եպարքոսին դիմել, որ եթէ կառավարութեան սաշտօնակց գործած անիրաւութեանց վերջ մը չը դրուի՝ պէտք պիտի ըլլայ Պատրիարքարանը գոցել, և կամ դեպքանկերուն սպառնալի բողոքել:

— Յառաջիկայ թուով պիտի հրատարակենք:

(1) Վկայեալ համբաւար հողագործ Մ. Աղաթան էֆէնտիի խիստ շահեկան մէկ յօդուածը «Պոլսո Էճիփսիէն»-է քաղելով:

(2) Վասպուրականի ընկերութեան դիտողներն և նոյն խմբագրականի շարունակութիւնը:

**ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ**

Սոսոյեան և Գէրբեման ընտանիքները կը փութան իրենց խօրին շնորհակալութիւնը յայտնել այն ամեն ազգականաց և բարեկամաց որք հաճեցան ներկայ գտնուիլ վաղամտիկ Տիկին Արմենուհի Սոսոյեանի յուղարկաւորութեան տխուր հանդիսին:

**ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՆ**

**ԳԵՐՄԱՆԻԱ ԵՒ ԱՆԳՂԻԱ**

Բէօթէրի 20 Հոկտ. հեռագրի համեմատ՝ Գերմանիոյ ու Անգլիոյ բուրժուական Չինաստանի մէջ ինչ պիտի ըլլայ. վերջնականապէս որոշուեցաւ. Լորտ Սալիզբըրի յանուն Անգլիոյ, և կոմս Հագֆիլտ յանուն Գերմանիոյ Հոկտեմբեր 18ին ստորագրեցին դաշնագրութիւն մը՝ որով Գերմանիա և Անգլիա համաձայնած են՝ որպէսզի Չինաստանի ցամաքային ամբողջութիւնը պահպանուի, հիմնկու հիմնայն միայն թէ իր նաւահանգիստները ազատ պիտի ձգուին ամեն երկրի վաճառականութեան:

Ահա քաղաքականութեան հրաշքներն, Գերմանիոյ կայսրը՝ որուն քանի մը շարաթ առաջ եթէ Չինաստ

խած է նէ, չիգտեմ (մեր բարեկամ Պ. . . ն հպատակութիւն, Լուսաւորական բառերը անգամ գիտէ):

Ս. — Ո՛ր կը նստի:

Պ. — Սա փողոցէն քիչ մը վար կերթաս, իշթէ անտեղուանքն է. ինքը երկայնահասակ է, էթիսէ սուղըն, երեսը իրեն պէս գոյն չունի:

Ս. — Չեղբը ծնօտին դրած կը մտածէ, ու աս ինչ այլանդակ մարդ է ըսելով կը մտնայ:

Պ. — Ինչ կը մտնաս միտիւ:

Ս. — Կը մտածեմ որ ասանկ մարդու մը դէմ դատ անելը պէշ է, բայց հոգ չէ, ես էֆէնտիին կը բարեխօսեմ, բաւական է որ աս մարդը փաստարան չ'ըլլայ:

Պ. — Մտածելով մը . . . փաստարան ըլլայ նէ ինչ կ'ըլլայ:

Ս. — Հա, զուն չես գիտեր. Եգիպտոսի մէջ սովորութիւն է որ վնասաբան մը վնասաբանի դեմ դատ չի վարէր:

Հա կեցիր, բացարեմ որ լաւ մը հասկնաս, որչափ որ Հայերէն գիտեմ բոս, վերջապէս մայրենի լեզուիդ չափ չես հասկընար:

տանի մայրաքաղաքը յանձնէին, գոհ չէր մնար, իւր դեպքանկն սպաննութեանը առթիւ, այսօր այնքան շուտ կը մտնայ այդ վիշտը, որ մինչև իսկ թոյլ չը պիտի տայ որ իր թշնամին երկրին դէմ ու է յարձակում ըլլայ:

**ՌՈՒՍԻԱ**

Բէօթէրի 20 Հոկտ. հեռագրի համեմատ՝ Գրեմի և Սիբալայի գծին վերջայ մեծ դաւադրութիւն մը դտած են Չարին դէմ, ուրտեղի երկաթուղին օգը գիտի ցնդեցնեն. Չարը և Չարուհին ճանապարհորդած պահուն: Շատեր ձերբակալուած են:

**ԹՈՒՐԿԻԱ**

**ՇԱՀՐ ԵՒ ՍՈՒԼԹԱՆԸ**

Կ. Պոլսոյ տեղական թերթերուն նախելով իր թէ Շահը և Սուլթանը՝ Տոլմա-Պաղէի պալատին առջև, երբ առաջին ընդունելութեան ժամանակ իրարու դէմ գիմաց կուգան, Շահը Սուլթանին ձիւքը համբուրել է յիմ խալիֆան՝ կոչելով:

Երբ լուրը տարածուել է Պարսիկ գաղթականութեան մէջ, լաւ տպաւորութիւն չէ ձգեր. որովհետև ինչպէս որ սուլթանը Մարգարէին յաջորդէ, նմանապէս Պարսից Շահը Ալիի յաջորդէ, անոնց աղանդաւորներուն իբր գրուի. Ալիի աղանդը զատ հերձուած մինէ որ իսլամութիւնը երկուքի բաժնած է հասան-Հիսէյնի չապաննութեան վրայ:

**ՏԷՐՈՒԹԵԱՆ ԳԱՆՁԻՆ ՄՆԱՆԿՈՒԹԻՒՆԸ**

Թուրքիոյ երկամական գանձը անցեալ տարուան պիւտքէն մէջ մէկ միլիոն ոսկու թաց մը տուած է:

Յակոբ փաշայի մեռնելէն ի վեր՝ արդէն թուրքիոյ գանձը ամէն տարի այս բայը ցոյց կուտայ:

**ՍԱԳՐԸ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԷԹ.**

Սուլթանի անձնական գանձի նախարար Սագրը Յովհաննէս էֆ. հրատարած է իր պաշտօնէն, հաւանական է որ իրեն յաջորդ է Չարեհ Տիւլպէր էֆէնտի:

**ԱԿՍԻՐԱՅԻ ԴԷՊՐԸ**

«Շարժում»-ի մէջ կը կարդանք. — Անցած ուրբաթ օր մեծ խառնա

Պ. — Աման կաղաչեմ ետքը իմ վիճակս ի . . . Ետու պատմէ:

Ս. — (Պ. ին ձեկն վրայ ապշած). երբ փաստարանի մը վրայ անեղիք ունիս և կամ փաստարան մը քեզի անիրաւութեան մը ըրաւ, դարձիր Էօպիլեթի շուրջը, փնտռէ, կորով ոսկի ալ վճարես, փաստարան մը չես կրնար գտնալ որ բոլոր գտողներն սովորութեան և նէղաբէթի դէմ է. է՛հ, եթէ շատ ծանր ինդիր մը ըլլայ ու փաստարանը գտար ընդունի ալ նէ, մինչև որ իսթինաֆի նախագահէն իզին չ'առնէ, չի կրնար գործի սկսիլ. իշթէ ասանկ կանոններ կան հոս:

Պ. — Աղբար աս ինչ հարեղ կանոններ է. Տանկաստան կ'ըլլայ տէ հոս ինչն չ'ըլլար. Սթամբուլ, Էրզրում, Իզմիր, Պէյրութ, Հալէպ, ո՛ր մէկը ըսեք, իմացածս փաստարանները իբրբո՞ւ միս անգամ կ'ուտեն հոն, չէ բիմ իբրբո՞ւ դէմ հախ պաշտպանն:

Ս. — Ինչ ընես, հոս թուրքիա չէ, Եգիպտոս է, Փարիզի թերթիպ:

(Շարունակելի)

չփութութիւն մը վերստին ծագեր է, Պոլսոյ մէջ Պոլսոյ Արարչաց թաղէն 3 թուրք առնաւարտ զինուորներ սուր և վեցհարուածեան ձեռքերին, կը վերադարձնեն մէկ քանի զինուորական պաշտօնեաներ: Ասոնք զինուորական շրջ-թայի տակ կառնուին և հազարապետը կը պատուիրէ անձնատուր ըլլալ: Առնաւարտ զինուորները կը յանդգնին շրջան կարել փախչիլ: Երկուքը կը ձերբակալուին և միտք, սուրը ձեռքը, կանհետանայ: Հոն գրտնուող բազմութեան մէջ ահ ու սարսափ տիրեր է:

Վարչութիւն «Նոր-Օր» լրագրի Գահիրէ

Պատ. լրագրի մէջ Տիար Թ. Ծնորհքեանի կողմէ հրատարակուած յօդուածը կարգացի:

Կուզեմ երկու տողով պատասխանել քանի մը կէտերու միայն: Ո՛չ ժամանակ ո՛չ ալ փափաք ունիմ վիճարանութիւնը ամիսներով տարիներով երկարելու: Ընթերցող հասարակութիւնը երկու կողմին ալ գրածները կարդացած է. թո՛ղ ամէն մարդ իր ուզածին կամ կրցածին պէս լուսարանուի:

Ա. — Պ. Ծնորհքեանի արտաբերած աստեղագրութեան մասին կարևոր գիտազգութիւն մը ունիմ: Վերջին նիստին «ատենադրութիւնը» ընդհ. ժողովի բովանդատեցած պաշտօնական գրութիւն մը չէ և չէր ալ կրնար ըլլալ, ըստ որում Պ. Ծնորհքեան այդ նիստին ի վեր իր համակիրներով մէկտեղ անջատուած է Ազգ. ընկերութեան և իր ուզած եղանակով խմբագրած է այդ «աստեղագրութիւնը» որ անտարակոյս շատ մը փոփոխութիւններ կրելու ենթակայ էր եթէ Ազգ. ընկերութեան ընդհ. ժողովին մէջ կարդացուելու ըլլար: Այս պատճառով ահա վերաշինել «աստեղագրութիւնը» պաշտօնական ո՛րէն հեղինակութեան գուրկ է:

Բ. — Պ. Ծնորհքեան, իր սովորութեան համեմատ, ՄԱՏ կ'անուանէ «Իրաւունք»-ի մէջ հրատարակած այն տեղեկութիւնն որով ըսած էի թէ Ազգ. ընկերութեան վերջին թատերական հասոյթին վրայ ձեռք դրած էր ինքը: Արդ. իմ այդ տեղեկութիւնն կատարելապէս սխալ էր այն թուականին երբ իմ յօդուածս «Իրաւունք»-ին խրկեցի: Տեսէ՛ք թէ ինչպէս:

Երբ տակաւին Ազգ. ընկերութեան անդամաց միջև հերձուածը չէր մտած և Պ. Ծնորհքեանի և իր մտերմներուն ու թաղ. խորհրդի միջև խզում յատալ չէր եկած՝ Պ. Ծնորհքեան, իբրև Տնօրէն խորհրդի Ատենապետ, նամակ մը գրած էր թատերական Միջազգային Յանձնախմբի Գանձապետ Պ. Ապէթին և խնդրած էր որ մէկ կողմէն զանձուած ապարիկները Պանք Օթոման գրութիւն յանուն Ազգ. ընկերութեան: Պ. Ապէթ պատասխան գրելով հաւանութիւն յայտնած էր:

Ի վերջոյ, երբ Ազգ. ընկերութեան Մայր Դիւանի և Տնօրէն խորհրդի նորոգ ընտրութիւն կատարուեցաւ՝ թաղ. խորհուրդը պաշտօնապէս հաղորդեց Պ. Ապէթին ընթերցութեան արդիւնքը: Եւ սակայն, Պ. Ծնորհքեան, հիմնուելով Պ. Ապէթի իրեն ուղղած նամակին վրայ՝ սպանաց յիշատակն՝ դատ բանալ իրեն դէմ եթէ երբէք քովը գտնուած զրամը իրմէ զատ ուրիշ մէկու սը յանձնէ: Պ. Մըլաղը քանիցս այդ գրամը յանուն թաղ. խորհրդի Պ. Ապէթէն պահանջած էր. բայց Պ. Ապէթ, յիշելով սպանալիքը, յանձնարարած էր Պ. Մըլաղըն երթալ իր փաստաբանը գտնել և

անոր հետ համաձայնիլ: Պ. Մըլաղը այս առթիւ քանիցս ինծի ցաւ յայտնած է թէ Պ. Ապէթի պէս հայաւեր ազնիւ օտարականի մը գրասենեակը մինչև իսկ իսկիւններ կը խրկուին մեր ներքին խնդիրներուն ու վէճերուն պատճառաւ: Այս ամէնը կարծեմ կ'ապացուցանեն թէ բացարձակապէս ճիշդ էր որ Պ. Ծնորհքեան այն ատեն ձեռք դրած էր Ազգ. ընկերութեան թատերական հասոյթի մէկ մասին վրայ:

Այս դեպքերէն շարժանք յետոյ Պ. Մըլաղը յաջողած էր համոզել Պ. Ծնորհքեանը որ այդ հասոյթին վրայ գրած արգելքը վերցնէ և այս կերպով թէ՛ ներկա կայացման հաշիւները և թէ՛ մնացած գումարը 128 անգլ. սօկի Պ. Մըլաղըի ձեռամբ յանձնուեցաւ լիւթմ. կարապետ պէյ Բէկեանի: Այս իրողութիւնները Աղեքսանդրի մէջ շատերուն մանաւանդ Ազգ. Պաշտօն. Մարմիններուն խիստ մտան ծանօթ ըլլալով, միմիայն Պ. Ծնորհքեանի ուղեղը կարող է զանոնք «տուտ» հռչակիլ:

Գ. — Գանք հիմայ Պ. Մ. Կիրճեանի և Պ. Յարութիւն Ալփիարի գրաւոր յայտարարութիւններուն:

Պարոն Ծնորհքեան կը խոստովանի թէ աստիճան չէ ուզած ուրանալ իր յայտարարութիւնը. ինչ հարկ ուրեմն հրատարակութեան յանձնել զայն: Եթէ Պ. Կիրճեան փափաք յայտնելու ըլլայ, պատրաստ եմ անմիջապէս գոհացում տալ իրեն: Կը բաւ ըսել թէ Պ. Կիրճեանի յայտարարութիւնը Ֆրանսերէն գրուած է ու շարժարիչ կերպով մերկապարանոց կ'ընէ նոր անդամ բերելու մասին Տիար Ծնորհքեանի խմբակին կողմէն գործ դրուած միջոցները:

Գալով Պ. Յարութիւն Ալփիարին, չի նայելով որ յիշեալ Պ. Ծնորհքեանի ուղղուած նամակին մէջ կ'առաջարկէ ինձմէ բացատրութիւն պահանջել «Իրաւունք»-ի մէջ իր մասին ըրած յիշատակութեան համար, բայց մինչև այսօր տակաւին այդ տեսակ բացատրութիւն մը ինքզան չէ ինձմէ և չէր ալ կրնար խնդրել քանի որ իմ քովս իր ստորագրութեան տակ նամակ ունի: Ահա, աստիկ հատուած մը այն նամակին ու ուղղակի մեր վիճարանութեան առարկայ եղող հարցին, այսինքն, ասկէ առաջ ժողովին նոր անդամներ բերելու դրութեան կը վերաբերի:

«Որքան որ կը յիշեմ, Աղեքսանդրի «ՆՈՐ Իշած էր» երբ առաջարկուեցաւ ինծի «անդամակցել և ամիսը 5ըրշ. տալ ընկերութեան մը որուն նպատակն էր քաղաքի «աղքատները խնամել»:

«Նպատակը ազնիւ գտայ և... ամապարկանք ածան, ուստի չի մերժեցի»:

«Պատահեցաւ որ այդ օրը և կամ յաջորդ կիրակիին ընդհ. ժողով մը գումարաւորութիւնը ինձ հարուցեց: Եւ գապի ինչպէս պիտի երթայի Ալհամայր, ինչպէս պիտի երթայի Սան-Սթեֆանո, և ինչպէս պիտի երթայի Սան-Սթեֆանո, և ինչպէս պիտի երթայի Սան-Սթեֆանո և ինչպէս պիտի երթայի Սան-Սթեֆանո»:

«Եւ պատահեցաւ որ այդ ժողովին մէջ ընտրուեցաւ ինձ հարուցեց: Եւ գապի ինչպէս պիտի երթայի Ալհամայր, ինչպէս պիտի երթայի Սան-Սթեֆանո, և ինչպէս պիտի երթայի Սան-Սթեֆանո և ինչպէս պիտի երթայի Սան-Սթեֆանո»:

«Եւ պատահեցաւ որ այդ ժողովին մէջ ընտրուեցաւ ինձ հարուցեց: Եւ գապի ինչպէս պիտի երթայի Ալհամայր, ինչպէս պիտի երթայի Սան-Սթեֆանո, և ինչպէս պիտի երթայի Սան-Սթեֆանո»:

չորդ կիրակիին ժողովի կանչուած էր. կ'ընդունի թէ նոր անդամ ըլլալով հանդերձ ընտրութեան մասնակցած էր: Մեր ալ հաստատել ուզածը և Պ. Ծնորհքեանի ուրացածը ճիշդ այս կէտերն են:

Ո՛ր կը մնայ այս կէտերուն մէջ խեղաթիւրումը կամ սուտը զոր Պ. Յարութիւն Ալփիար կը վերագրէ ինծի:

Պ. Ալփիար կը ցաւի որ հարկադրուած է իմ ուղղամտութեան մտօնն կարծիք փոխել: Այս տեսակ խօսք մը, Պ. Ալփիարի բերնին մէջ, իմ ծիծաղըս միայն կըրնայ շարժել: Չեմ գիտեր թէ Պ. Ալփիար բարոյականը ինչ կերպով կ'ըմբռնէ: Ամէն պարագայի մէջ շատ յայտնի է որ իր իմ մասին նախապէս կազմուած նպատար կարծիքը փառքի տիրոջ մը նկատել շատ հեռու եմ: Առանց շատ հեռուները երթալու, կը բաւէ պզտիկ գաղափար մը կազմել Պ. Ալփիարի նկարագրին վրայ երբ նկատելու ըլլանք թէ իմ քովս նամակ մը ունենալէ յետոյ քաջութիւն կ'ունենայ զիս ստախօս անուանելու...:

Գ. — Անցնելով ուրիշ կէտի մը և Պ. Ծնորհքեանի գործածած ոճովը պատասխանելով, կը յայտարարեմ թէ բացարձակապէս սուտ է որ ես կամ իմ ընկերներս թաղ. խորհրդի առաջին ընտրութեան միջոցին Պ. Մըլաղըին խոստացած ըլլանք զինքը թաղական ընտրելու ու զինքը խաբար:

Մենք միմիայն համեմատական ընտրութեան միջոցին Պ. Մըլաղըին քուէ տուինք որ ատեն արդէն ընտրելիներու ցանկը սահմանափակուած էր: Ընդ հակառակը, առաջին ընտրութեան միջոցին, Պ. Ծնորհքեանի էն մտերմ բարեկամներն էին որ Պ. Մըլաղըն յուսադրեցին, զանի իրենց հաւաքումներուն մասնակից ըլլի և յետոյ շարաչար կերպով զինքը խաբարեցին: Այս իրողութեանը արդէն մէկ անգամ ուղղակի իրեն Պ. Ծնորհքեանին յայտնած եմ երբ ժողովէ վերադարձին գրասարանի մը մէջ այս կարգի խնդիրներու մասին տեսակցեցանք: Պ. Ծնորհքեան այս տեսակցութիւնը մասնաւոր կերպով յիշելու է, որովհետեւ այդ տեսակցութեան միջոցին իր զարգացման ու բարոյականին վրայ ունեցած վրտահոտութիւնն շարաչար գործածեց, զանազան խօսքեր խառնելով Պ. Մըլաղըին մօտ: Պ. Ծնորհքեանի այս առաքելութիւնը առաջին և միակը չէ իր տեսակին մէջ:

Ե. — Վերջացնելով յօդուածս, երկու խօսք ալ Պ. Ծնորհքեանի իմ մասին պահանջած պատիժին նկատմամբ ընել աւելորդ չեմ սեպեր:

Պ. Ծնորհքեանի և բարեկամներուն ակնարկած պատիժը իմ պաշտօնանկութիւնն է թաղ. խորհրդի քարտուղարութիւնէն: Գիտեմ այն ամէն էնթրիկները զոր այդ խմբակը ապարդիւն կերպով երկու տարիէ ի վեր բանեցուց իր նպատակին հասնելու համար: Գործերը մինչև այն ծայրահեղութեան տարին որ ասկէ քանի մը ամիս առաջ «Շարժում»-ի մէջ գիս իրր գող ամբաստանելու ելան կեղծ ստորագրութեան մը տակ: Եւ այս շնորհալի խմբակը կը պահանջէ որ իրենք բարոյականին դէմ ամենաբուռն յարձակումներ ընեն ու ես լուծիւն պահեմ, արգարացնելով իրենց ամբաստանութիւնները:

Յայտնի է որ ասանկ պահանջում մը միմիայն Պ. Ծնորհքեանի ուղեղին կազմութիւնը ունեցող մարդիկ կրնան ընել:

Կը փափաքեմ Պ. Ծնորհքեանի յայտարարել թէ նոյն իսկ իմ պաշտօնանկութիւնն ինծի համար պատիժ մը չեմ նկատեր: Մինչև այսօր համոզուեցաւ պաշտօնիս զո-

հած չեմ ու ասկէ ետքն ալ չեմ գոհեր: Սա ալ ըսեմ որ թաղ. խորհուրդը ինծի ստորագրութիւն չի տար կոր, այլ աշխատութեան փոխարէն վարձատրութիւն մը: Պ. Ծնորհքեանի գիտնալու է որ, ես իմ համեմատ կարողութեանս մէջ, արտաքոյ թաղ. խորհրդի քարտուղարութեան ալ կարող եմ օրապահիկս հայթայթել: Եթէ ինքը պաշտօնին համար ընտրելիներ ունի, կարող է ներկայացնել զանոնք որոնց որ պէտք է. և եթէ այդ ընտրելիները աշակցութեան կը կարօտին, ես մինչև իսկ պատրաստ եմ սիրայօժար իմ տեղս անոնց տալու «պատիժին» ենթարկուիլ, ի մեծ սիրովս մեր սիրելի բարեկամ Պ. Ծնորհքեանին:

ԼԵՒՈՆ ՄԿՐՏԻՉԵԱՆ

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

ԻՐԱՏԷԻ ԽՏՐՈՒԹԻՒՆ

Սուլթանը իր քանակահարկի յոբանջանին առթիւ, իբր շնորհ, իրատէ մը հանած էր, որով այն օրէն սկսեալ թուրքի մէջ հրատարակուող թերթերը զրոյնամիտութիւն զերծ պիտի մընային:

Չարմանօք կը տեղեկանանք թէ սոյն իրատէն միմիայն մայրաքաղաքին մէջ հրատարակուող թուրքերէն թերթերու կը պատկանի եղբոր հետեւաբար հայերէն և օտար թերթերն ըստ հին սովորութեան՝ պիտի շարունակեն դարձեալ խորաբանչիս թերթի համար 2 փութայ փութի սուրբ վճարել:

Թուրքի մէջ հրատարակուող Հայերէն և օտար թերթերէն ոմանք մինչև չորս հազար հատ կը սպառեն օրական. եթէ հաշուի տակ առնուի նստիկ յառաջ եկած հասոյթն ի նըստապատ Սուլթանի գանձին, անջուշտ չը կարծուի որ Սուլթանը իր գանձէն ատանկ զոհորթիւն մը ըրած ըլլայ:

ՃԻՊՐԱԹԱՐԻ ԹԻՒՆԵԼԸ

Փրանսայի հանրաժանութիւնը երկրաչափ մը Պ. Պէռլիէն ընդարձակ ծրագիր մը պատրաստած է, որ մտերս Մարտի կատարութեան պիտի ներկայացնէ:

Նպատակն է՝ ձիարարութիւն նեղուցին ներքեւէն թիւնէլ մը շինել Ալփիարի մէկ եզերքէն մինչև Եւրոպայի եզերքը, որ իրարու ճիշդ գիմաց են: Նմանապէս ուրիշ երկրաչափ մ'ալ Մանչի վրայ հսկայ կամարով մը շինելու ծրագիր ներկայացուցած է, Գալէէն Տոմբ. տարիներէ ի վեր կը լսուի, տեսնենք երբ պիտի յաջողի:

ՆԱՄԱԿ ՍՈՒՏԱՆԵՆ

Վ. Ս. 2 յոգ 10 Հոկտեմբեր

Վարչութիւն Նոր-Օր լրագրի Գահիրէ

Յուսալով որ մեր նախորդ գրութիւնը հրատարակման արժանանալու պատիւը վայելած է. կը փութանք այսօր «Նոր-Օր»-ի էջերուն յանձնել մեր երկրորդ հանգանակութեան ցու-

ցակը, միշտ աւելին ընելու ջերմ փափաքով, եթէ երբէք «Թուրիսթներու սէղօն»ին հոս տեղ գտնուիլ վիճակուի մեզ:

Վատի-Հայֆաէ անդին՝ Օմուրման, Թարթուս, Հայֆա, Սուարիմ և Տոնկոլաի մեր պնդիացի, իտալացի, յոյն, իսպան, և ինչ եօթն ներկայացուցիչներու հանգանակութեան արդիւնքը հասած չէ մեզ դեռ:

Ամուսնը Սուրբատուաց	դահ. ողջ
Նախորդ ցուցակէն	1721
Ս. Ն. Լուիզո	Հայֆա 200
Փ. Գարվանօփուլո	" 100
Կ. Բալօէրո	" 100
Աթմանսա Նասօփուլո	" 100
Կ. Լ.	" 100
Մաքսուտ Շէհրլեան	Էմնա 100
Յակոբ Մանուկեան	" 60
Սէզար Հիւկ	" 50
Ճէմն Փէթրովիչ	" 30
Լուրրիս Փէր Վույ	" 30
Տիք Օէտովա	" 30
Տիմիթրի Կալաթու	" 30
Հիւտարն Փուրքէր	" 30
Էմմանուէլ Տ. Փոթրիատիս	" 30
Վ. Փէն	" 30
Միհրան Օհանեան	Էմնա 30
Ի. Յ. Ֆրիման	Հայֆա 30
Թ. Թուիլ	" 30
Արթիուր Սիու	" 30
Մօքարո ֆիէթրո	" 40
Անանուն (իտալացի)	" 40
Ժորժ Տ. Գարտաչիլուրիս	" 40
Ռուբէն Սիմիլեան	Էմնա 30
Ռիլիամ Լիմնէլ	Հայֆա 30
Լուսպրոս մ. Միքայիտիս	" 25
Վահագա Իպրահիմ	" 20
Ֆիլիփո Անթօնիփուլո	" 20
Ահմէտ Միտհաթ	" 20
Ղուզրիալ Կրկիս	" 20
Ստեֆան Ադէքսանար	" 20
Սթափրոս Վիլիլիարիս	" 25
Տիմիթրի Գաթիարիս	" 30
Փօթիս Գաթիարիս	" 20
Սթեֆանօ Գաթիուտիս	" 20
Ե. Կալաթուլոս	" 20
Յակոբ Տէվլէթեան	Էմնա 20
Անճէլօ Կուրկալաթի	Հայֆա 20
Ալպէն Սանթինի	" 30
Սալամա Մալաթիս, Գատտիս Ապտէլսաիտ, Ժորժ Սալիպ, Անթոն Խալիլ, Օմար Մուհամմէտ (նամական պաշտօնականներ):	" 30
Մահմուտ Մուհամմէտ	" 10
Ահմէտ Մահմուտ	" 10
Հարիւրապետ Մահմուտ Նէտիմ	" 10
Հարիւրապետամատոն Զաքի	" 5
Վահագա Աթալա	" 5
Միսաք Տէվլէթեան	Էմնա 5

3666  
Երեսուն և չորս եգիպտական ոսկի պատրաստ գումարը զրկուած է Որբասիրաց ընկերութեան Պատ. Գործ, Ժողովը հասցէին. մնացեալը գանձելի, թերեւ շատ անշնան մաս մ'անապահով:  
Ս. Օ.  
(Շարունակելի)

Le Gérant J. MUNIER  
Տպագ. «Միլիթիւն».— Թ. Ս. Փափագեանի

### ԳԱՅԷ ԵՓՐԱՏ

Ապօին Պապ-էլ-Պոսթան Հրապարակին վրայ եւ Նուագածուաց խմբի Զօրանցի դիմացը  
ՕՀԱՆՆԷՍ ՍԻՄՈՆԵԱՆ  
ԴԱՆԻԷԼ ՀԱՅԱԳՈՐԾԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

Մէկ հատիկ Զբօսարանն է Գահիրէի մէջ, ուր կենցաղասէր մը կարենայ անցընել հաճոյալի ժամանց մը. Ապօինի ընդարձակ հրապարակին զօլագին օգուր, վայրին սքանչելի դիւրքը, և սպասներուն մաքրութիւնը, ըմպելեաց անարատութիւնը. այս ամեն առաւելութիւններով եՓՐԱՏ ԶԲՅՈՒՐԱՆԸ քել ատենուան մէջ յաջողած է ունենալ յաճախորդներու պատկառելի թիւ մը, որոնք ամեն իրիկան, ժամագրութիւն ըրած են, ու ժամերով կը վաճելեն երկանիկ ընկերութիւն մը:  
Ամեն կարգի զովարար, թարմ ու անխառն ըմպելիներէ զգաւ մասնաւոր ինամքով կը պատրաստուի ընտիր ընտիր միլիոններ օշարակ. ամենէն դրժուարահաճներն անգամ պիտի գոհ մնան Եփրատէն:

### ՃԱՆԱՐԱՆ ՀԱՅՎԱԿԱՆ

ՄԻՀՐԱՆ ԵՒ ԵՂԱ. ԳԱԶԱՆՃԵԱՆ  
Շարա Ապու-Սապան  
Նիեու-Տնիվերսի իգեղարանին դիմացը.  
Օգտատուն ու զուարճարի գիլըրդ մաւքը ու վայելուչ սպաս. համեղ ու աննդարար կերակուրներու զանազանութիւնն, անխառն պատրաստութիւնն. ճոխ ճաշացոյցակ մը գիւրաւ մատչելի գիներով. ահա՛ Գազանճեան եզբարց ճաշարանը:  
Ո՞վ որ կ'ոնջէ, փորձի համար մէկ անգամ թող դիմէ, վստահ պէտք է ըլլայ թէ մշտակալ յաճախորդը պիտի դառնայ հայկական ճաշարանին:

### ՊԱՆԳ ԼԻՕՆԷԶ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱԿԱԼ ԵԳԻՊՏՈՍԻ  
Մ. ՍՍՍՕՅԵԱՆ

Լիոնի հանրաձայնութիւնը, այս անգամ ունեցաւ իւր Եգիպտոսի զործակալնալ, Տ. Միլիթի Սօսոյեան, որ իւր հրապարակային ցոյց տուած պարկեշտ զործունէութեամբն ամենուս վստահութիւնը կը վայելէ:

Սոյն զործակալութիւնը, 11 Սեպտ. թիւ իրեն յանձնուած և Լիոնի բաղաբաղեցութեանէն պաշտօնապէս վաւերացուած փոխանորդագրի համաձայն, պիտի կատարէ Պանգ Լիոնէզի միջոցաւ ամեն տեսակ զբանական և Գուտի Ֆոնտիլէի, Վիլ սը Բարիի գործողութիւններ, գանձումներ. Սմասկան շնչին գումարի մը ինսպորտութեամբ ձեռք կը բերուի. քել ատենէն, պահեստի բաժնեթուղթ մը, վիճակահանութեամբ երաշխաւորուած:

Փափաքողները հաճին դիմել Նիւպոսի վրայ փաստարան Ռարթաքիի զբանակեակը:

### ԶՈՒԼԻԶ-ՄԵՔԵՆԱԳՈՐԾ

ՏԻԳՐԱՆ ԵՒ ԵՂԱՐԻԿ  
ՍԱԲԳԻՍԵԱՆ  
Ս. ԳԱՐՔԻՆԵԱՆԻ ՆԱԽԿԷՆ ՏՊԱՐԱՆԸ

Կը ձուլեն, կը ջինեն երկաթէ ու արդյրէ զանազան գործիներ ոսկերչութեան և ուրիշ նուրբ արհեստներու վերաբերեալ, ծորակ, և ինչ, յաճախորդները գոհացնող պայմաններով:

### Ա. Զ. Դ

Ազգային Գալտեան վարժարանի համար Օգոստական - Ուսուցչուհի մը պէտք ըլլալով, փափաքողք կրնան դիմել վարժարանս և բանակցել Տնօրինութեան հետ:

ՏՆՕՐԻՆՈՒԹԻՒՆ  
Գալտեան Երկու վարժարանի

### ՊԵԼԱՄԱ-ԹԻՇՄԱՆԵԱՆ ԸՆԿ.

ԱՄԵՐԻԿԱՆ ԴԵՐՁԱԿՆԵՐ  
ԱՐԱՆՑ ԵՒ ՏԻԿԱՆՑ  
ԵՒ ԶԵՒԿԻՏՈՒԹԵԱՆ ԴՊՐՈՑ  
Ապօինի մեծ պողոտային վայր Տալիայի Սանիլի դիմացը, ճախիկն էլեկտրական գործիներու վանաւանդներ:

Վերջերս Ամերիկայէն հօս եկած հաստատուած ըլլալով կը յայտարարենք արգոյ հասարակութեան թէ՛ պատրաստ ենք գոհացնել մեզ դիմող Պատ. յաճախորդները, գործի մաքրութեան, գիներու չափաւորութեան և ճշգրտագոյնութեան կողմէն:

Մեր գործատեղոյն մէջ կ'աւանդուին նաև ձեւագրութեան դասեր ամերիկեան ամենավերջին կատարելագործուած մէթոտով,  
Մանրամասնութեանց համար դիմել մեր գործատեղին:

### ԱՍԱՍՏԱՐՈՅԺ

Պ. ՆԻԿՈՂԻՍՏԱՍ

Վերջերս հաստատուած ի Գահիրէ, Գաթէ տը լա Պուրսի կից, Բ. յարկ, թիւ 9 գտնուի:

Կը բժշկէ բեքի և ակուպի ամեն անասակ հիւանդութիւնները: Աղքատները ձրի կը գարմանէ ամեն օր, աւսուանեան փախը 8 և 9:

**Տ Պ Ա Ր Ա Ն**

**Ի ԳԱՀԻՐԷ**

ԱՊՏԻՆ ՓՈՂՈՑ. ՍՈՒԳԱԹԱՄԻ ՃԻՇԴ ԴԻՍԱՑ

**ՏԷՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ**

**ԹՍԻԳՈՄ Ս. ՓԱՓԱԶԵԱՆ**

Սոյն նորակազմ տպարանին մէջ կը տպուին հայերէն ու եւրոպական լեզուաւ ամեն տեսակ հրատարակութիւններ, պարբերական թերթեր, յայտարարութիւններ, շրջաբերականներ, այցետոմսեր, մահազգեր, հարսանեաց հրաւիրագրեր, կանոնագրիւններ, նամակագրութիւններ, պահարաններ, հաշուեցուցակներ և ինչ:

Յանձնարարութիւնները կը կատարուին փութով, ամենայն խնամով եւ ճաշակաւոր սպազմութեամբ:

**ԶԱՓԱԻՈՐ ԳԻՆԵՐՈՎ**